ISSN 2738-2664

ԱՐԴԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

MODERN PSYCHOLOGY
SCIENTIFIC BULLETIN

АКТУАЛЬНАЯ ПСИХОЛОГИЯ
НАУЧНЫЙ ВЕСТНИК

ԵՐԵՎԱՆ 2022, № 2 (11)

ETHNIC NETWORKS IN REPRESENTATIONS OF PERMANENT RESIDENT MIGRANTS' FAMILY MEMBERS LIVING IN ARMENIA

Survey conducted with the financial support of RA science committee (N 20TTSH-040)

Mnatsakanyan L. R. (Yerevan State University, Yerevan, Armenia)

Galstyan M. V. (Institute of Archaeology and Ethnography, NAS RA, Yerevan, Armenia)

mnatsakanyanlilit@ysu.am, galstyanmihraniae@gmail.com

Received: 28.05.2022

Revised: 15.08.2022

Accepted: 29.08.2022

DOI: https://doi.org/10.46991/SBMP/2022.5.2.067

Migrants' ethnic network – co-ethnics of migrants that are already established in the host country- often play a major role in the migration-decision making process, as well as in the process of migrants' adaptation in the new host country. Most of the migrants leaving for permanent residence are labour migrants, whose family members continue to live in Armenia.

The aim of our research is to study the representationsof ethnic networks and attitude towards them among family members of the permanent resident migrants who live in Armenia.The research is based on qualitative methodology with application of semi-structured interviews and non-participative observation methods. The research was carried out with 23 people whose at least one family member emigrated for permanent residency.

As a result of theresearch, three main axes characterizing the representations of ethnic networks and attitude towards themamong migrants' families were distinguished: first, the representation of ethnic networks as a source of help and security, second, high expectations of ethnic networks' members, and, third, the contradictory attitude towards ethnic networks.

We can conclude that ethnic networks can be a certain protective factor in a migrant's family members'representations, even a substitute for the family, towards which often inadequately high expectations and contradictory attitude are formed.

Keywords: *migration, ethnic network, representations, attitude, family.*

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License. © The Author(s) 2022

Ժամանակակից հայ հասարակության միգրացիոն հոսքերի մեջ մշտական բնակության մեկնող միգրանտները կարևոր սոցիալական և ժողովրդագրական նշանակություն ունեն ոլորտն ուսումնասիրող մասնագետների համար: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մշտական բնակության մեկնած միգրանտների մեծամասնությունը նախկին աշխատանքային միգրանտներ են [7]:

Մշտական բնակության նպատակով միգրացիան, լինելով բավականին ուսումնասիրված ՝իրազգագրական, սոցիոլոգիական, էթնոմշակութային, տնտեսական հայեցակետերով, բավարար ուսումնասիրված չէ հոգեբանական տեսանկյունից: Մշտական բնակության նպատակով միգրացիայի համատեքստում հոգեբանական առումով ուսումնասիրման արժանի հարց ենք համարում նման միգրանտների՝ Հայաստանում բնակվող ընտանիքի անդամների մոտ՝ միգրացիայի հետ կապված հոգեբանական փոփոխությունները, սոցիալ-հոգեբանական խնդիրների դինամիկան: Մշտական բնակության նպատակով մեկնած, նախկին աշխատանքային միգրանտների ընտանիքները, որպես կանոն կիսված ընտանիքներ են («տրանսնացիոնալ ընտանիքներ»), որոնք ապրում և զարգանում են բաժանման մշտական զգացողության, մեծ հեռավորության վրա ընտանեկան հարաբերությունների պահպանման, ինտենսիվ վիրտուալ շփման պայմաններում [1, էջ 157]:

Հայ աշխատանքային միգրանտների մեծամասնությունը միգրացիայից առաջ ընդունող երկրում արդեն ունի որոշակի սոցիալական կապեր: Այդ մարդիկ հիմնականում էթնիկ հայեր են (միգրանտի ընտանիքի անդամներ, բարեկամներ, ընկերներ, ծանոթներ և այլն): Այս ցանցի առկայությունը որոշ չափով նպաստում է ինչպես միգրանտի՝ միգրացիա իրականացնելու որոշումը կայացնելուն, այնպես էլ միգրացիայից հետո տեղում հարմարվելուն:

Սոցիալական կապերի այս տիպի ցանցը, ըստ Դ. Մեսսեյի և համահեղինակների՝ միջանձնային հարաբերությունների ամբողջություն է, որ ձևավորվում է ինչպես արյունակցական, ընկերական կապերի, այնպես էլ ծագման երկրում մնացած մարդանց, ինքնին միգրանտների և նոր տեղում հիմնավորված մարդկանց միջև առկա ընդհանուր սոցիալական ծագման վրա [6]: Էթնիկ ցանցը կարող է միգրանտի համար լինել նշանակալից «սոցիալական կապիտալ», որն ըստ Պ. Բուրդյոյի՝ փաստացի կամ ենթադրելի ռեսուրս է, որ կապվում է կայուն կամ թույլ ինստիտուցիոնալ հարաբերությունների հետ, որոնք հիմնված են ծանոթության սկզբունքների վրա [5]:

Էթնիկ ցանցը, ինչպես միգրանտի, այնպես էլ նրա՝ Հայաստանում ապրող ընտանիքի անդամների համար կարող է ունենալ հատուկ հոգեբանական նշանակություն և կարող է ընկալվել որպես որոշակի պաշտպանիչ գործոն՝ կատարելով ֆրանսիացի հոգեբան Դիդիե Անզյոյի [4] կողմից նկարագրված «պաշտպանիչ ծրարի» դեր: Ըստ Դ. Անզյոյի՝ ընտանեկան, մշակութային, սոցիալական հարաբերությունների շերտերը կարծես թաղանթներ լինեն, որոնք անձին պաշտպանում են արտաքին սոցիալ-մշակութային միջավայրի անկանխատե-

սելի գործոններից: Կարող ենք համարել, որ միգրանտի համար ընդունող օտար երկրում առկա էթնիկ ցանցը կարող է համատեղել ընտանեկան, մշակութային, սոցիալական հարթություններում առկա հարաբերությունները, և նրա համար դառնալ «պաշտպանիչ ծրար»:

Այսպիսով՝ մեր հետազոտական աշխատանքի խնդիրն է ուսումնասիրել մշտական բնակության նպատակով միգրացիա իրականացրած անձի՝ Հայաստանում բնակվող ընտանիքի անդամների մոտ էթնիկ ցանցի մասին պատկերացումները և էթնիկ ցանցի հանդեպ վերաբերմունքը:

Մեթոդաբանություն: Հոդվածում ներկայացվող նյութը մաս է կազմում որակական մեթոդաբանությամբ իրականացված ավելի ընդարձակ հետազոտության, որ դիտարկում է էթնիկ ցանցի հոգեբանական նշանակությունը մշտական բնակության մեկնած միգրանտի՝ Հայաստանում բնակվող ընտանիքի անդամների մոտ՝ հաշվի առնելով տվյալ ընտանիքի տոհմածառի պատմության մեջ առկա միգրացիաների համատեքստը: Նշված հետազոտությունն իրականացվել է մշտական բնակության մեկնած միգրանտների՝ Հայաստանում ապրող ընտանիքի անդամների հետ. ընտրանքը կազմված է 60 հոգուց, որոնք մշտական բնակության մեկնած անձանց ծնողները, զավակները կամ քույր-եղբայրներն են: Այս հոդվածում առանձնացրել ենք ընդհանուր ընտրանքից այն մասնակիցներին, ում ընտանիքի անդամը ի սկզբանե աշխատանքային միգրանտ է և վերջինիս միգրացիայի որոշում կայացնելու մեջ վճռական է եղել ընդունող երկրում առկա որոշակի էթնիկ ցանցի առկայությունը (հարազատներ, ընկեր, ծանոթ, համաքաղաքացի-համագյուղացի): Այսպիսի միգրանտները մեր ընդհանուր ընտրանքի մեջ 23-ն են: Նրանք մշտական բնակության են մեկնել միջինում՝ 7 տարի առաջ (բոլորը 23-ն էլ՝ Ռուսաստանի դաշնություն): Այսպիսով՝ ունենք համապատասխանաբար հետազոտության 23 մասնակից, որոնք միգրանտի ծնողը, զավակը, քույրը կամ եղբայրն են:

Հետազոտությունն անցկացվել է որակական մեթոդաբանությամբ՝ կիսակառուցվածքային հարցազրույցի և չներգրավված դիտման մեթոդներով:

Հոդվածում վերլուծված արդյունքները վերցված են մասնակիցների հետ հարցազրույցների շնորհիվ հավաքված տեքստային տվյալներից, որոնք վերլուծվել են բովանդակության վերլուծության միջոցով:

Արդյունքների վերլուծություն, մեկնաբանություն: Առկա 23 հարցազրույցների հիման վրա կարող ենք առանձնացնել երեք հիմնական առանցք, որոնք բնութագրում են մշտական բնակության մեկնած, նախկին աշխատանքային միգրանտի՝ Հայաստանում բնակվող ընտանիքի անդամների մոտ էթնիկ ցանցի վերաբերյալ պատկերացումները և դրա հանդեպ վերաբերմունքը:

Էթնիկ ցանցը՝ որպես օգնության և ապահովության աղբյուր

Հարցազրույցների ընթացքում կարելի է նախևառաջ նկատել, որ ընտանիքի անդամների համար միգրանտն ընկալվում է որպես ինքնին, ի սկզբանե օգնության կարիք ունեցող մարդ. մեկը, ով ապրում է որոշակի արտակարգ հան-

գամանք կամ կյանքի ինչ-որ բարդ փուլ, որի պատճառով ունի օգնության, նեցուկի, նույնիսկ խնամքի կարիք:

Հարցազրույցների ժամանակ հետազոտության մասնակիցները էթնիկ ցանցի անդամների մասին խոսելից հաճախ վերջիններիս դիտարկում են՝ որպես օգնության աղբյուր, նրանց վերագրում օգնողի գործառույթ: Հարցազրույցների ժամանակ մասնակիցներն իրենց խոսքում հաճախ կիրառում են, օրինակ, «օգնող ձեռք» փոխաբերությունը («Որ մերոնց հետ լավ են վերաբերվում, ես ինչ-որ տեղ հանգստանում եմ, որ իրենց օգնող ձեռք կա» կամ «Քանի որ հայեր կան, մանավանդ հարազատներ, ավելի ապահով ենք զգում, որ օգնության հարց լինի, ձեռք են մեկնում»):

Հետազոտության մասնակիցների մոտ էթնիկ ցանցի մասին պատկերացումներում կարող ենք նկատել նաև, որ էթնիկ ցանցին վերագրվում է նաև միգրանտին տրվող ապահովության գործառույթ («Եթե կան հայեր, իրենք միգրանտները կարող են իրենց ապահովության մեջ զգալ», «Որքան շատ շփում ունենան հայերի հետ, այնքան ավելի ապահով կլինեն» :

Այս համատեքստում կարող ենք վերադառնալ էթնիկ ցանցի՝ «պաշտպանիչ ծրար»-ի գործառույթի մասին գաղափարին, ուր էթնիկ ցանցն ընկալվում է՝ որպես աջակցություն և ապահովության զգացում ստեղծող գործոն, պաշտպանում անձին օտար և նոր միջավայրում անկանխատեսելի հանգամանքներից:

Էթնիկ ցանցի վերաբերյալ վերը նշված պատկերացումները գուցե էթնիկ ցանցի անդամների և միգրանտի միջև հարաբերությունների ոչ ինստիտուցիոնալ բնույթի արդյունք են: Գուցե եթե այդ հարաբերությունները կարգավորվեին որևէ հաստատության (օրինակ՝ պետության կամ այլ ինստիտուցիոնալ մարմնի) միջոցով, էթնիկ ցանցի փոխարեն հաստատությունն ինքը կստանձներ «պաշտպանիչ ծրար»-ի գործառույթը հետազոտության մասնակիցների պատկերացումներում:

Բարձր սպասելիքներ էթնիկ ցանցի անդամներից: Միգրանտի ընտանիքի անդամների մոտ հաճախ կարող ենք նկատել միտում՝ էթնիկ ցանցին վերագրել այնպիսի գործառույթներ, որոնք վերջինս կարող է մասամբ կատարել, կամ չկարողանալ կատարել: Դրանք այնպիսի գործառույթներ են, որ անձը կարող է ակնկալել սերտ հարազատական հարաբերություններից, մասնավորապես՝ ընտանիքից: Ավելի ստույգ, էթնիկ ցանցի անդամները հետազոտության մասնակիցների կողմից հաճախ կարող են ընկալվել՝ որպես միգրանտին առանց նախապայմանների պաշտպանող, նրա մասին հոգ տանող, կենցաղային պայմաններ ապահովող մարդիկ: Այսինքն՝ միգրանտի ընտանիքի անդամների մոտ առկա է որոշակի իդեալականացում էթնիկ ցանցի անդամների վերաբերյալ: Այդ իդեալականացումը, որպես կանոն, գործնականում չի հաստատվում: Էթնիկ ցանցի անդամները հաճախ կարող են չհամապատասխանել նրանց սպասելիքներին և վերագրումներին, ինչը, ինչպես միգրանտի, այնպես էլ նրա ընտանիքի անդամների մոտ կարող է նախևառաջ հիաս-

թափության զգացում առաջացնել («Շատ հաշվարկով հարաբերություններ են», «Ջերմություն չկա, մարդկություն չկա»): Այս հանգամանքը կարող է նաև առիթ դառնալ լքվածության զգացման և հանգեցնել ցանցի անդամների հետ կոնֆլիկտների, ընդհուպ՝ հարաբերությունների խզման («...գործնական են իրար հետ [ընկերոջ հետ], այլևս չի դիմի օգնության: Առանձնացել է, որովհետև պայմանները չի հավանել, լարված հարաբերություններ են եղել» կամ «Քույրս մի կերպ տղայիս օգնեց, շատ մեծ դժվարությամբ: Տղաս, հատակին քնելով, իր թուք ու մուրը լսելով, մի քանի ամիս մնաց, մի քանի տարվա նյարդեր քայքայեց այնտեղ, գնաց»):

Հետազոտության մասնակիցների մոտ էթնիկ ցանցի վերաբերյալ չափազանցված սպասելիքների համատեքստում կարող ենք նկատել նաև այն, որ նրանք կարծես թե ակնկալում են, որ իրենց ընտանիքի անդամը ընդունող երկրում կարող էր ունենալ Հայաստանում ունեցած սոցիալական հարաբերություններին համարժեք հարաբերություններ: Այս երևույթը կարող ենք մատնանշել այնպիսի արտահայտություններում, ինչպես. «Այնտեղ հարաբերությունները շատ գործնական են, հարազատական չեն», «Շփումներ ունի, բայց միևնույնն է՝ Հայաստանի նման չէ» կամ «Այն, ինչ այստեղ է ունեցել, նույնը այնտեղ չունի»: Այս համատեքստում կարող ենք նկատել հերքում՝ կապված այն բանի հետ, որ միգրանտը, լքելով հարազատ երկիրը, կարող է ունենալ կորուստ՝ այս պարագայում սոցիալական կյանքի բովանդակության կորուստ: Այս կորստի հերքման արդյունքում կարծես թե փորձ է արվում էթնիկ ցանցի շուրջ վերակառուցել որոշակի՝ պաշտպանական բնույթի պատրանքային իրականություն: Այդ իրականության մեջ էթնիկ ցանցն իդեալականացված է և իրականացնում է գրեթե նույն գործառույթներն, ինչ միգրանտի ընտանիքը: Ուստի էթնիկ ցանցի կողմից ցանկացած արարք, որ կարող է չհամապատասխանել այդ իդեալականացված կերպարին, փլուզում է ստեղծված պատրանքային իրականությունը և առիթ դառնում էթնիկ ցանցի կտրուկ արժեզրկման: Դրա արդյունքում տեղի են ունենում կոնֆլիկտներ, հարաբերությունների խզում: Այդ միջադեպերը լրջորեն տրավմավորում են ինչպես միգրանտ անձի միգրացիայի փորձառությունը, այնպես էլ նրա՝ Հայաստանում զարգացող ընտանեկան կյանքը:

Էթնիկ ցանցի հանդեպ վերաբերմունքի հակասականությունը

Հետազոտության որոշ մասնակիցներ էթնիկ ցանցի հանդեպ երբեմն արտահայտում են նաև որոշակի հակասական վերաբերմունք: Այսպես՝ նրանք կարող են իրենց խոսքում արտահայտել համոզվածություն, որ իրենց ընտանիքի անդամի համար ընդունող երկրում հայերի ներկայությունը օգտակար է և հոգեբանորեն կարևոր, սակայն միաժամանակ անվստահություն և տագնապ դրսևորել հայերի ներկայության առնչությամբ. «Մի կողմից վստահություն կա, հանգիստ ես, որ նեղության մեջ էլ լինի, կարող է [հայերը] օգնեն...բայց նաև հավանականություն կա, որ կարող է դավաճանեն, դա ևս իմ զգացողություններից է, հայի վայիսություն այսպես ասած» կամ «Այնտեղի հայերը վստահելի

չեն, այստեղի նման չէ» և այլն: Այս հակասականության մեջ կարող ենք տեսնել անձի մոտ սեփական հայկական ինքնության հանդեպ հակասական վերաբերմունք: Եվ կարծես թե անձի հայկական ինքնությունը երկփեղկված լինի (երկփեղկում պաշտպանական մեխանիզմի առումով), ուր ինքնության այդ ճեղքված մասերից մեկը մերժված է և հակասության մեջ է հայտնվել ինքնության ընդունված հատվածի հետ: Արդյունքում ինքնության մերժված կողմը դառնում է բացասական կերպար՝ անվստահելի, վնասող, հետևաբար՝ հետապնդող [2, 3], հատկապես օտար մշակութային միջավայրում:

Եզրակացություն: Իհարկե, մեր հետազոտության 23 մասնակցի հետ աշխատանքի արդյունքները, թեկուզև որակական, բավարար չեն միգրացիոն երևույթների մասին ընդհանրական եզրակացություններ կատարելու համար, սակայն միայն մեր ընտրանքի առնչությամբ կարող ենք եզրակացնել, որ մշտական բնակության մեկնած միգրանտի՝ Հայաստանում բնակվող ընտանիքի անդամների կողմից իրենց հարազատի միգրացիան կարող է հաճախ ընկալվել՝ որպես հանկարծակի փոփոխություն՝ մշակութային, սոցիալական առումներով, որտեղ միգրանտն ընկալվում է՝ որպես օգնության, ապահովության կարիք ունեցող, խոցելի անձ: Ուստի էթնիկ ցանցի կարևորությունն այս տեսանկյունից ահռելի է միգրանտի ընտանիքի համար, քանի որ այն կարող է լինել պաշտպանիչ գործոն, նույնիսկ ընտանիքի փոխարինիչ, որ կրում է իդեալականացման և արժեզրկման բարդ և դինամիկ որակներ: Էթնիկ ցանցն, իր ողջ հակասականությամբ հանդերձ, միգրանտի ընտանիքի կողմից ընկալվում է՝ որպես որոշակի անհրաժեշտ անցումային տարածք՝ միգրանտի և օտար երկրի միջև:

Գրականություն

1. **Գալստյան Մ., Օհանջանյան Ռ., Զաքարյան Թ., Հակոբյան Գ.** Արդի հայ ընտանիքը փոխակերպվող հասարակությունում, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2017, 328 էջ:
2. **Մնացականյան L.** Հետապնդում և արտագաղթ, Ակտուալ Արվեստ #2(8)2019, Պարանոյա, Երևան, 2019, էջ 18-25 :
3. **Մնացականյան L.,** Արտագաղթի հոգեկան փորձառությունը ապաստանի հայցման պայմաններում, Ակտուալ Արվեստ հրատ., Երևան, 2021, 406 էջ
4. **Anzieu, D. et al.,**Les enveloppes psychiques, Dunod, Paris, 2000, p. 288
5. **Bourdieu, P.** “The Forms of Capital.” In Handbook of Theory and Research for the Sociology of Education, edited by J. G. Richardson, New York: Greenwood Press.1985. pp. 241–258.
6. **Messey D., Arango J., Hugo G., Kouaouci A. Pellegrino and Tayllor E.,** Theories of International Migration: A Review and Appraisal // Population and

Development Review. 1993, Vol. 19. No. 3, pp. 431-466.https://www.jstor.org/stable/2938462?origin=crossref.

7. **Ryana, L. and D'angeloba,** A. 2018. 'Changing Times: Migrants' Social Network Analysis and the Challenges of Longitudinal Research'. Social Networks 53 (2018), 148–158.

ԷԹՆԻԿ ՑԱՆՑԸ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԾ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԳՊԿ (N 20TTSH-040)-ի ֆինանսական աջակցությամբ:

Մնացականյան Լ. Ռ. (Երևանի պետական համալսարան, Երևան, Հայաստան)

Գալստյան Մ. Վ. (ԳԱԱ ՀԱԻ Էթնոսոցիոլոգիայի բաժին, Երևան, Հայաստան)

Հայաստանից մշտական բնակության նպատակով մեկնող միգրանտների՝ միգրացիայի իրականացման և նոր վայրում հարմարման գործում հաճախ մեծ դեր ունի միգրանտի էթնիկ ցանցը՝ ընդունող երկրում արդեն հաստատված էթնիկ հայերը: Մշտական բնակության մեկնող միգրանտների զգալի մասը աշխատանքային միգրանտ է, ում ընտանիքի անդամները շարունակում են բնակվել Հայաստանում:

Մեր հետազոտության խնդիրն է ուսումնասիրել մշտական բնակության նպատակով միգրացիա իրականացրած անձի՝ Հայաստանում բնակվող ընտանիքի անդամների մոտ էթնիկ ցանցի մասին պատկերացումները, և էթնիկ ցանցի հանդեպ վերաբերմունքը: Հետազոտությունն իրականացվել է 23 անձի հետ, ում ընտանիքի անդամներից գոնե մեկը մշտական բնակության է մեկնել արտերկիր: Հետազոտվողները միգրանտի ծնողը, զավակը, քույրը կամ եղբայրն են: Հետազոտությունն անցկացվել է որակական մեթոդաբանությամբ՝ կիսակառուցվածքային հարցազրույցի և չներգրավված դիտման մեթոդներով:

Արդյունքների վերլուծության արդյունքում մշտական բնակության մեկնած միգրանտի ընտանիքի անդամների մոտ էթնիկ ցանցի վերաբերյալ պատկերացումները և դրա հանդեպ վերաբերմունքը բնութագրող երեք հիմնական առանցք է առանձնացվել. նախ՝ էթնիկ ցանցի մասին պատկերացումը՝ որպես օգնության և ապահովության աղբյուր, ապա էթնիկ ցանցի անդամներից բարձր սպասելիքների առկայությունը, և էթնիկ ցանցի հանդեպ վերաբերմունքի հակասականությունը:

Կարող ենք եզրակացնել, որ էթնիկ ցանցը միգրանտի ընտանիքի անդամների պատկերացումներում կարող է լինել որոշակի պաշտպանիչ գործոն, նույ-

նիսկ ընտանիքի փոխարինիչ, որի հանդեպ ձևավորվում են հաճախ ոչ համարժեք բարձր սպասելիքներ և հակասական վերաբերմունք:

Հանգուցային բառեր՝ *միգրացիա, էթնիկ ցանց, պատկերացումներ, վերաբերմունք, ընտանիք:*

ЭТНИЧЕСКАЯ СЕТЬ В ПРЕДСТАВЛЕНИЯХ ПРОЖИВАЮЩИХ В АРМЕНИИ ЧЛЕНОВ СЕМЕЙ ПОСТОЯННЫХ МИГРАНТОВ

Мнацаканян Л. Р. (Ереванский государственный университет, Ереван, Армения)

Галстян М. В. (Институт археологии и этнографии НАН РА, Ереван, Армения)

Этническая сеть мигрантов, состоящая из уже обосновавшихся в принимающей стране этнических армян, часто играет большую роль в миграции тех-мигрантов, которыеуезжают из Армении с целью постоянного переселения на новое место. Большинство выезжающих на постоянное место жительства составляют трудовые мигранты, при этом члены их семей остаются жить в Армении.

Целью нашего исследования является изучение представлений об этнической сети у проживающих в Армении членов семьи постоянного мигранта, а также их отношение к этнической сети. Исследование проведено путем качественной методологии-методами полуструктурного интервью и невовлеченного наблюдения. Исследование проводилось среди 23 человек, у каждого из которых хотя бы один из членов семьи уехал на постоянное место жительства за границу. В результате анализа полученных данных среди членов семей выехавших на постоянное место жительства мигрантов были выделены три основные категории представлений об этнической сети и отношения к ней. Сначала восприятие этнической сети как источника помощи и безопасности, затем завышенные ожидания членов этнической сетии противоречивое отношения к ней. Можно заключить, что этническая сеть может быть определенным защитным фактором в представлениях членов семей мигрантов, даже заменителем семьи, по отношению к которой нередко формируются завышенные ожидания и противоречивое отношение.

Ключевые слова. *миграция, этническая сеть, представления, отношение, семья.*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ * СОДЕРЖАНИЕ * CONTENTS

ASRIYAN E.V., KARAPETYAN N.I., SAMOKHVALOVA A.G. THE ADAPTATION OF THE ARMENIAN VERSION OF THE STUDENT'S PSYCHOLOGICAL WELL-BEING SCALE 3

Ասրիյան Է. Վ., Կարապետյան Ն. Ի., Սամոխվալովա Ա. Գ. ՈՒՍԱՆՈՂԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՍԱՆԴՂԱԿԻ ՀԱՅԵՐԵՆ ՏԱՐԲԵՐԱԿԻ ՏԵՂԱՅՆԱՑՈՒՄ .....
Асриян Э.В., Карапетян Н.И., Самохвалова А.Г. АДАПТАЦИЯ АРМЯНСКОЙ ВЕРСИИ ШКАЛЫ ПСИХОЛОГИЧЕСКОГО БЛАГОПОЛУЧИЯ СТУДЕНТА .....

AVANESYAN H. M., ASRIYAN E. V., PAPOYAN S. A. THE MAIN CHARACTERISTICS OF PERSON'S SELF-REGULATION IN THE PROCESS OF PROVIDING THE PSYCHOLOGICAL WELLBEING DURING COVID-19 11

Аванесян Г. М., Асриян Э. В., папоян с.а. ОСНОВНЫЕ ХАРАКТЕРИСТИКИ САМОРЕГУЛЯЦИИ ЛИЧНОСТИ В ПРОЦЕССЕ ОБЕСПЕЧЕНИЯ ПСИХОЛОГИЧЕСКОГО БЛАГОПОЛУЧИЯ В УСЛОВИЯХ COVID-19 .....
Ավանեսյան Հ. Մ., Ասրիյան Է. Վ., Պապոյան Ս. Ա. ԱՆՁԻ ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ COVID-19 ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ .....

GRIGORYAN SH. S. ANALYSIS OF THE PERSPECTIVES OF NEUROMARKETING RESEARCH OF CONSUMER BEHAVIOR 18

Գրիգորյան Շ. Ս. ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐՔԻ ՆԵՅՐՈՄԱՐԿԵԹԻՆԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ .....
Григорян Ш. С. АНАЛИЗ ПЕРСПЕКТИВ НЕЙРОМАРКЕТИНГОВЫХ ИССЛЕДОВАНИЙ ПОТРЕБИТЕЛЬСКОГО ПОВЕДЕНИЯ .....

GEVORGYAN D. E., ASRIYAN E. V. STUDY OF PSYCHOPATHOLOGICAL MANIFESTATIONS OF WAR VETERANS 28

Գևորգյան Դ. Է., Ասրիյան Է. Վ. ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀՈԳԵԱԽՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ .....
Геворгян Д. Э., Асриян Э. В. ИЗУЧЕНИЕ ПСИХОПАТОЛОГИЧЕСКИХ ПРОЯВЛЕНИЙ ВЕТЕРАНОВ ВОЙНЫ .....

TARJUMANYAN S. V. MEANING-LIFE ORIENTATIONS AMONG PEOPLE WITH PARENTAL DEPRIVATION IN CHILDHOOD 41

Թարջումանյան Ս. Վ. ԿԵՆՍԱԻՄԱՍՏԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՄԱՆԿԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ ԾՆՈՂԱԿԱՆ ԴԵՊՐԻՎԱՑԻԱ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՄՈՏ .....
Тарджуманян С. В. СМЫСЛО-ЖИЗНЕННЫЕ ОРИЕНТАЦИИ У ЛЮДЕЙ С РОДИТЕЛЬСКОЙ ДЕПРИВАЦИЕЙ В ДЕТСКОМ ВОЗРАСТЕ.....

HARUTYUNYAN N. A. PSYCHOLOGICAL ANALYSIS OF THE PROBLEM OF WOMEN'S SOCIAL ACTIVITY IN THE CONTEXT OF FAMILY STABILITY..... 49

Арутюнян Н. А. ПСИХОЛОГИЧЕСКИЙ АНАЛИЗ ПРОБЛЕМЫ СОЦИАЛЬНОЙ АКТИВНОСТИ ЖЕНЩИН В УСЛОВИЯХ СТАБИЛЬНОСТИ СЕМЬИ.....
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ն. Ա. ԿՆՈՋ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ .....

SARGSYAN A. A., PAPOYAN V. R. PSYCHOLOGICAL PERCEPTION OF A POLITICAL LEADER IN MODERN SOCIETY..... 57

Սարգսյան Հ. Ա., Պապոյան Վ. Ռ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԿԵՐՊԱՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱՐԳՈՒՄ .....
Саргсян А. А., Папоян В. Р. ПСИХОЛОГИЧЕСКОЕ ВОСПРИЯТИЕ ПОЛИТИЧЕСКОГО ЛИДЕРА В СОВРЕМЕННОМ ОБЩЕСТВЕ.....

MNATSAKANYAN L. R., GALSTYAN M. V. ETHNIC NETWORKS IN REPRESENTATIONS OF PERMANENT RESIDENT MIGRANTS' FAMILY MEMBERS LIVING IN ARMENIA 67

Մնացականյան Լ. Ռ., Գալստյան Մ. Վ. ԷԹՆԻԿ ՑԱՆՑԸ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԾ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ .....
Мнацаканян Л. Р., Галстян М. В. ЭТНИЧЕСКАЯ СЕТЬ В ПРЕДСТАВЛЕНИЯХ ПРОЖИВАЮЩИХ В АРМЕНИИ ЧЛЕНОВ СЕМЕЙ ПОСТОЯННЫХ МИГРАНТОВ.....

VARDANYAN K. E. THE CHARACTERISTICS OF SUICIDAL AND NON-SUICIDAL SELF-INJURIOUS BEHAVIORS IN CHILDREN AND ADOLESCENTS..... 75

Վարդանյան Կ.Ե. ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՍՈՒԻՑԻԴԱԼ ԵՎ ՈՉ ՍՈՒԻՑԻԴԱԼ ԻՆՔՆԱՎՆԱՍՄԱՆ ՎԱՐՔԱՁԵՎԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....
Варданян К.Е. ОСОБЕННОСТИ СУИЦИДАЛЬНОГО И НЕСУИЦИДАЛЬНОГО САМОПОВРЕЖДАЮЩЕГО ПОВЕДЕНИЯ У ДЕТЕЙ И ПОДРОСТКОВ .....